ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 07 » 09 2017թ. N 726/ՉԻՄ-1/8092-17

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ ՏԱԹԵՎ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Ի լրումն ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի
օգոստոսի 18-ի N ՌՄ/ՍՍ/7504-17 գրության

Հարգելի տիկին Խաչատրյան,

Հայտնում ենք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, իսկ Ծառայության պետը հաշվետու է ՀՀ Նախագահին, ՀՀ վարչապետին և ՀՀ կառավարությանը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Նախարարությունում Ծառայության պատասխանատուների մասնակցությամբ կազմակերպվել է քննարկում՝ Ձեր կողմից հիշատակված հրապարակումներում բարձրաձայնված խնդիրների առնչությամբ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է, որ ԶԼՄ-ների բոլոր հրապարակումների հիման վրա Ծառայությունն իրականացրել է վերահսկողություն, ստուգումներ և դիտարկումներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Հարկ ենք համարում նշել, որ մեր նպատակն է բարելավել սննդամթերքի անվտանգության ոլորտը, սակայն պետական վերահսկողությունն առանց հանրային հսկողության չի կարող լիարժեք լինել: Ուստի, կարևորելով «Հետք»-ի, ինչպես նաև մյուս լրատվամիջոցների և ՀԿ-ների ակտիվ ու հետևողական աշխատանքը, առաջարկում ենք Ծառայության հետ սերտ համագործակցություն ծավալել և վստահ ենք, որ համատեղ աշխատանքի եզրեր գտնելու դեպքում արդյունքն առավել մեծ կլինի, սպառողի շահերը՝ առավել պաշտպանված:

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 46 41, ֆաքս. (374 11) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am

Ինչ վերաբերում է «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Երկրի հարցը» հաղորդաշարին տված հարցազրույցին, հայտնում եմ, որ այն բխում է ՀՀ կառավարության նոր ծրագրով սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվելիք բարեփոխումների տրամաբանությունից, և Ծառայության կողմից կատարված աշխատանքը պետք է գնահատել ՀՀ կառավարության նոր ծրագրից բխող գործողությունների և միջոցառումների իրականացման արդյունքում:

Հավելենք, որ այդ բարեփոխումներն (որակի կառավարման համակարգերի փուլային ներդրում, սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորում, պարտադիր սպանդանոցային մորթի ապահովում, գյուղատնտեսական կենդանիների նույնականացման, հաշվառման ու համարակալման թվայնացված համակարգի ներդրում և այլն) արդեն իսկ մեկնարկել են և կշարունակվեն մինչև 2022 թվականը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
հեռ՝. 011 521524